«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Արմինե Գյուրջյան

Մանկապարտեզ՝ « Մրգաշենի մանկապարտեզ » **ՀՈԱԿ**

2023թ

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1 Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում 5

1.1 Ազգային տոներն ու ծեսերը 5

1.2 Ծիսական խաղերի նկարագիրը 11

Գլուխ 2 Գործնական մաս 17

Եզրակացություն 25

Գրականության ցանկ 26

Ներածություն

Նախադպրոցականների դաստիարակության համակարգում կարևոր տեղ ունի գեղագիտական դաստիարակությունը, որը նպաստում է երեխայի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում նրա իմացական գործունեությունը, բացահայտում ստեղծագործական կարողությունները և խթանում դրանց զարգացմանը:

Ազգային տոները, ծեսերն ու ծիսակարգերը մեծ հնարավորություն են տալիս երեխաների գեղագիտական դաստիարակության համար՝ տալով գիտելիք (տեղեկություններ ազգային սովորությունների մասին), ձևավորելով երաժշտական կարողություններ, ճաշակ, ինչպես նաև գեղարվեստական հտմություններ (ծեսերին նախապատրաստվելիս ծիսական ատրիբուտների պատրաստում, նկար, ծեփակերտում և այլն):

«Երեխայի բաց հոգու աչքերի մեջ ամենազորեղը առաջին տպավորությունն է, և դա հետագայում սնում է նրա սիրտն ու հոգին, թևավորում նրա երևակայությունը, ուրեմն նախ և առաջ նրան պետք է մատուցել ամենալավը և փորձվածը՝ ամենալավ երգերն ու պարերը, ամենալավ խաղերն ու գույները, այսինքն նյութի, թե՛ ընտրության, թե՛ մատուցման ձևը պիտի լինի հնարավորին չափ միակը, լավագույնը»:[1]

Արթուր Շահնազարյան

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի,եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի հանգամանքներն ու միջոցները: Դրանցից կարելի է առանձնացնել ազգային տոներն ու ծեսերը, որոնց միջոցով երեխաներին փոխանցում

[1] Արթուր Շահնազարյան «Երգը և երաժշտությունը մանկապարտեզում» Երևան 2001 էջ 4

ենք մեր հին պատմությունն ու մշակույթը: Ծեսն ավանդական կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է: Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին, արժեքների համակարգին, ազգությանը, պետությանը:

Իմ հետազոտական աշխատանքի թեման է՝ «Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում»: Հետազոտության նպատակն է՝ ավագ խմբի (5-6 տարեկան) երեխաներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար: Երեխաների գեղագիտական և քրիստոնեական դաստիարակության գործում անգնահատելի նշանակություն ունեն ազգային տոների, ծեսերի ծանոթացումը: Մենք՝ մանկավարժներս, պետք է մեծ պատասխանատվությամբ կատարենք մեզ ստանձնած առաքելությունը:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածական մասից, երկու գլուխներից, որոնք ունեն ենթավերնագրեր, եզրակացությունից և օգտագործված գրականությունից:

Առաջին գլուխը կրում է՝ «Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում» վերնագիրը: Առաջին գլխի ենթավերնագրերում ներկայացված են, թե ինչ է ծեսը և նկարագրված են մի քանի հայկական տոներ և ծեսեր, ծիսական խաղեր: Երկրորդ գլուխը կազմված է գործնական մասից, որտեղ ներկայացված է դասի պլանավորում խոսքի զարգացում, ապլիկացիա և ֆիզկուլտուրա առարկաներից:

Դասապլանին կից ներկայացված է տնօրենի,մեթոդիստի և միջին խմբի դաստիարակի՝ դասերի դիտարկման արդյունքում կատարված եզրակացությունները:

Գլուխ 1 Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Ծեսն այն միջավայրն է, որը երեխային հնարավորություն է տալիս խաղալ ազատ կամ ունենալ դերային խաղեր:

Մարդաբան Մ. Դուգլեսը ծեսը սահմանում է որպես գործողությունների տիպեր, որոնք ծառայում են հավատքի արտահայտման, կամ էլ որոշակի խորհրդանշական համակարգերին պատկանող ձևեր:

Ծեսն ունի արարողական բնույթ: Այն խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի ներդաշնակ, հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող և ակտիվ փոխանցող: Այս տարիքի երեխայի խոսքի զարգացումը ծեսի իրագործման ընթացքում տեղի է ունենում բնական, հաղորդակցական միջավայրում և մթնոլորտում: Ծեսի կազմակերպման ընթացքում երեխան խոսում և շփվում է հասակակիցների, մեծահասակների հետ: Նախադպրոցական կրթության մեջ ծեսերի կարևորության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ երեխայի անձի զարգացման բոլոր ոլորտները զուգահեռ զարգանում են ծեսին նախապատրաստվելու և այն իրագործելու գործընթացում:

1.1 Ազգային տոներն ու ծեսերը

<u>Ամանոր (Նոր տարի)</u>

Ըստ պատմական տվյալների, վաղ ժամանակներում հայերը Նոր տարին նշել են մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը: Բնությունը հարություն է առնում գարնան սկզբին, և հայ մարդը այդ օրն էլ դարձրել է Նոր տարի և նշել շքեղ տոնախմբությամբ՝ փառաբանելով բնության զարթոնքը, ակնկալելով բերքառատ տարի:

Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի 1-ը (օգոստոսի 11-ը և տևել մինչև սեպտեմբերի 9-ը): Ըստ ավանդության, Հայկ Նահապետը Հայոց ձոր գավառում սպանել է բռնակալ Բելին՝ ազատություն պարգևելով իր տոհմին ու հետևորդներին: Ենթադրաբար դա տեղի է ունեցել մ.թ.ա. 2492թ. օգոստոսի 11-ին: Օգոստոսյան տոնը հայերը կոչել են Նավասարդ (նավա-նոր և սարդ-տարի): 18-րդ դարում , Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք, որպես Նոր տարվա սկիզբ ընդունվեց հունվարի 1-ը: Միայն 20-րդ դարի սկզբներից համընդհանուր դարձավ հունվարի 1-ը որպես տարվա սկիզբ տոնելը:

<u>Սուրբ Ծնունդ(Աստվածահայտնություն)</u>

Նոր տարուն հաջորդում է Սուրբ Ծնունդը, որը մեր եկեղեցին նշում է հունվարի 6-ին: Այդ օրը մատուցվում է Պատարագ, և մարդիկ իրար ողջունում են՝ ասելով. «Քրիստոս ծնավ և հայտնեցավ, օրհնյալ է Ծնունդը Քրիստոսի»: Համաձայն եկեղեցական ավանդության՝ Քրիստոսը Հովհաննես Մկրտչից Հորդանան գետում մկրտվեց այն օրը, երբ լրացավ նրա 30 տարին: Այդ պատճառով եկեղեցին Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոները կատարում է միևնույն օրը: Հունվարի 5-ի երեկոյան վառում են եկեղեցու բոլոր կանթեղները, մատուցվում է ճրագալույցի պատարագ: Այդ օրը մարդիկ եկեղեցում վառված ճրագներն իրենց հետ տուն են տանում: Այն խորհրդանշում է աստվածային լույս, եկեղեցու օրհնություն:

Հունվարի 6-ին՝ Պատարագից հետո, կատարվում է նաև Ջրօրհներգի արարողություն: Ջուրն օրհնվում է սուրբ խաչով, Սուրբ Ավետարանով և մյուռոնով: Մարդիկ այդ ջրի մեջ թաթախում են ձեռքերը, քսում մարմնի հիվանդ հատվածներին՝ համոզված, որ օրհնված ջուրը կլավացնի իրենց:

Տյառնընդառաջ

Հայ առաքելական եկեղեցին Տյառնընդառաջը տոնում է փետրվարի 14-ին, Քրիստոսի ծննդից ՝ հունվարի 6-ից, քառասուն օր հետո: Այն անշարժ տոն է:

Երբ Մարիամն ու Հովսեփը քառասնօրյա Հիսուսին բերում են տաճար, ընդառաջ է գալիս Սիմեոն ծերունին, գրկում մանկանը և գոհություն ու փառք տալիս Աստծուն, որ իրեն արժանի դարձրեց Փրկչին տեսնելու: Այստեղից էլ տոնի անունը՝ «Տյառնընդառաջ»՝ Տիրոջն ընդառաջ:

Ըստ ավանդույթի այդ օրը պետք է պատրաստել աղանձ, դրան խառնել քաղցրեղեն, չրեղեն ու ընդեղեն և բաժանել արարողությանը ներկա մարդկանց: Տերենդեզի օրը սովորաբար եկեղեցիների բակում մեծ խարույկ են վառում: Այդ օրը շատ են նաև ամուսնացող զույգերը, ովքեր Աստծո օրհնությունը ստանալուց հետո թռչում են կրակի վրայով:

Բարեկենդան

Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Տոնը հավանաբար կապ ուներ գարնան սկսվելու հետ: Եվ պատահական չէին զվարճությունները, որոնք արթնացնող բնությանը ուրախ դիմավորելու, մարդկանց վերակենդանացնելու խորհուրդ ուներին: Մարդիկ մաղթում էին միմյանց բարի կենդանություն: Այն Առաքելական եկեղեցու շարժական տոներից է, նշվում է Սուրբ Սարգսի տոնից մինչև Մեծ պաս ընկած ժամանակաշրջանը: Այդ օրը քահանայական դասին և ժողովրդին արտոնվում է ճոխ սեղան և զվարթություն՝ հաջորդող պահքը ուրախ սրտով մտնելու և երկարատև պահոց օրերին դիմակայելու համար: Տոնն ավարտվում է Բուն Բարեկենդանով, որը նշվում է շաբաթապահքերի և Մեծ պահքի նախընթաց կիրակի օրը: Բարեկենդանին մարդիկ

զվարճանում էին, երգում, պարում, գցում ճոխ սեղաններ, դիմակավորվում, կազմակերպվում խաղեր և ներկայացումներ:

Բարեկենդանի առաջին օրերին ընդունված էր պատրաստել գաթա և հալվա: Բուն Բարեկենդանի օրը ընդունված էր երեկոյան խաշած ձու ուտել՝ այդպիսով փակելով խրախճանքը: Տոնի տարածված խաղերից էր ճլոթին կամ ճոճախաղը:

<u>Ծաղկազարդ (Ծառզարդար)</u>

Ենթադրվում է, որ նախաքրիստոնեական ժամանակաշրջանում տոնը նվիրված է եղել ջրի և անձրևի աստվածուհի Նարին: Նարը պտղաբեր անձրևներ էր ուղարկում երկիր: Երաշտի ժամանակ մարդիկ տիկնիկների և ծիսական երգերի ուղեկցությամբ մաղթանքներ էին ուղղում Նարին, որպեսզի նա անձրև տար դաշտերին: Ծեսի մաս կազմող տիկնիկը ունի տարբեր անուններ՝ Նուրի, Հուրի, Խուճկուրուրիկ, Չիչի-մամա, Ճիճի-մումա և այլն:

Ծաղկազարդ (ծառզարդար, ծառկոտրուկ) գարնանային բացօթյա տոնախմբությունների սկիզբն ազդարարող եկեղեցական և ժողովրդական տոն է: Կատարվում էր Զատկից մեկ շաբաթ առաջ՝ ի հիշատակ Քրիստոսի Երուսաղեմ մտնելու օրվա: Այդ օրը հայող եկեղեցիները զարդարվում են ուռենու ճյուղերով, առավոտյան կատարվում է ժամերգություն և Անդաստանի կարգ, որից հետո օրհնված ճյուղերը բաժանվում են հավատացյալ ժողովրդին, որոնք պահվում էին մինչև հաջորդ ծաղկազարդ: Դրանց վերագրվում էր բարիքի, առատության, պտղաբերության հմայական զորություն: Ծաղկազարդին ընդունված է եղել ծառերը զարդարել գունավոր թելերով: Այդ պատճառով է, որ տոնը ստացել է Ծառզարդար անվանումը:

<u>Սուրբ Զատիկ</u>

Հիսուս Քրիստոսի Հարության տոնը կոչվում է նաև Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից և վերադարձ առ Աստված: Զատիկը Հայ Առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկն է: Սկիզբ է առնում հրեաների

կողմից այսօր նշվող Պասեք տոնից, որի ժամանակ ըստ քրիստոնեական դավանանքի 1-ի դարում Երուսողեմում խաչվել և հարություն է առել Հիսուս Քրիստոսը:

Ենթադրություններ կան, որ այն հայերի նախաքրիստոնեական տոներից է, որի իմաստը եղել է բնության զարթոնքը, որը տոնվել էգարնան սկզբին: Զատիկը շարժական նտոն է: Դրան նախորդել է քառասուն օր պաս պահելը: Զատիկին մարդիկ երկար են պատրաստվել՝ մատաղի միջոցներ են հավաքել, յոթ բաղարջ են թխել, ձու են հավաքել, հրաժարվել են խնջույքներից, հարսանիքներից, մաքրությամբ են զբաղվել:

Տոնի նախօրեին և տոնին մարդիկ միմյանց ողջունել են Քրիստոսի հարության առթիվ («Քրիստոս հարյավ ի մեռելոց, Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»), մասնակցել պատարագի, հավաքվել ծիսական սեղանի շուրջ՝ պասից դուրս եկել, մատաղ են արել, ներկած ձվեր իրար նվիրել, ձվակռիվներ, պարեր ու խաղեր կազմակերպել:

Զատիկի ծեսի գլխավոր խորհրդանիշը ձուն է: Այն համարել են աշխարհի օրինակ. դրսի կեղևը՝ երկինք, սպիտակ թաղանթը՝ օդ, սպիտակուցը՝ ջուր, իսկ դեղնուցը՝ երկիր: Ձուն համարել են նաև հարության խորհրդանիշ:

Քրիստոնեական մեկնաբանմամբ ձուն համարվել է քրիստոսի ժայռե գերեզմանի խորհրդանիշ, որտեղից էլ նա հարություն է առել: Կարմիր գույնով ներկելն էլ Քրիստոսի թափած արյունն է խորհրդանշել:

<u>Համբարձում</u>

Այս տոնը նշվում է Զատիկից ուղիղ քառասուն օր հետո, հինգշաբթի օրը: Թե՛ տոնի անունը, թե՛ նշելու օրը եկեղեցական օրացույցով բացատրվում է Ավետարանի այն պատմությամբ, ըստ որի հարություն առնելուց հետո Քրիստոսը քառասուն օր շրջում է երկրի վրա և ապա համբառնում: Համբարձման տոնը խորհրդանշում է հասարակության և բնության կապը: Համբարձումը պատկանում է շարժական տոների թվին, ունի երեսունհինգ օրվա շարժականություն (ապրիլի վերջից մինչև հունիսի սկիզբ):

Համբարձման տոնը Հայաստանում վերածվել է ժողովրդական տոնակատարության. երիտասարդ տղաներն ու աղջիկները տոնի առթիվ հավաքում են յոթ գույբի ծաղիկ, կժի մեջ լցնում յոթ աղբյուրի ջուր, իրենց նշանները գցում ջրի մեջ և համբարձման գիշերը աստղունք դնում, այսինքն՝ դրանք հանձնում աստղերի խորհրդին, որից հետո կատարում գուշակություններ: Համբարձման կիրակի օրը երիտասարդները կազմակերպում են տոնախմբություններ՝ Համբարձմանը նվիրված երգերի, պարերի զուգակցությամբ:

Հայ Առաքելական եկեղեցին Համբարձման տոնի օրը հիշատակում է նաև 1441 թվականին հայոց կաթողիկոսական աթոռը Սիսից տեղափոխելու և Սուրբ Էջմիածնում վերահաստատելու պատմական դեպքը:

<u>Վարդավառ</u>

Վարդավառ կամ Վարդեվառ , հայ ժողովրդական նախաքրիստոնեական տոն, ըստ եկեղեցական տոնացուցի նշվում ՝ Զատկից տասնչորս շաբաթ հետո, կիրակի:

Հնում Վարդավառի տոնը կապում էին հայկական դիցաբանության ջրի, սիրո, պտղաբերության ու գեղեցկության աստվածուհի Աստղիկի հետ:

Վարդավառի տոնը նշվում էր ժողովրդական մեծ հանդիսություններով: Աստղիկին վարդեր էին նվիրում, աղավնիներ էին բաց թողնում և միմյանց վրա ջուր ցողում: ջուր ցողելու արարողությունը պահպանվել էնաև մեր օրերում: Վարդավառի խորհուրդը նաև եղել է ջրի պաշտամունքը: Ավելի վաղ ժամանակներում տոնակատարությունը հիմնականում տեղի է ունեցել սարերում, ջրերի ակունքների մոտ, որոնք համարվել են յուրօրինակ սրբատեղիներ: ընդհանրացված սովորույթ էր, որ մինչև Վարդավառի տոնը խնձոր չուտեին, տարվա առաջին խնձորը ուտում էին Վարդավառին: Որոշ վայրերում առաջին խնձոր վայելելը ուղեկցվում էր հատուկ նախապատրաստություններով: Երիտասարդները Վարդավառի շաբաթ երեկոյան դեզեր էին շինում և մութն ընկնելուն պես սկսում հերթով վառել այդ դեզերը մինչև լուսաբաց խորովելով առաջին ուտելի խնձորները:

1.2 Ծիսական խաղերի նկարագիրը

Հայտնի է, որ նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատանքի ամենաարդյունավետ ձևը խաղն է: Խաղը հենց այն գործունեությունն է, որում երեխան սկզբում էմոցիոնալ, իսկ հետո ինտելեկտուալ ձևով յուրացնում է մարդկային հարաբերությունների ողջ համակարգը: Խաղը զարգացնում է սանի

- ուշադրությունը
- հիշողությունը
- երևակայությունը
- ընկալումը
- հաղորդակցական կարողությունը
- ինքնատիրապետումը
- ակտիվությունը
- ստեղծագործելու կարողությունը
- վերլուծելու, համադրելու կարողությունը:

Ծեսերն ու ծիսական գործողություններն այս տարիքում երեխաների կողմից ընկալվում են որպես խաղ, դերախաղ: Ծեսերի ամբողջական իրականացումն ինքնին կարելի է համարել խաղ, որոնք նույնպես նպաստում են երեխայի խոսքի զարգացմանը: Ծիսական խաղերը, բացի հետաքրքիր և տպավորիչ լինելուց, զարգացնում են մանր և խոշոր մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը:

Աշխատանքի ընթացքում օգտագործվող հիմնական մեթոդներից են.

- իրավիճակների խաղարկում
- դերախաղ
- խմբային աշխատանք:

Ամանորյա խաղեր

- ***Ընկուզախաղեր***
  - ընկույզը մատների շրջանաձև շարժումով պտտել: Կարելի է կազմակերպել մրցույթ՝ ում ընկույզն է երկար պտտվում: Եթե սաները դժվարանում են այն կատարել մատներով, կարող են ընկույզը պտտել՝ երկու ձեռքերի ափերի մեջ առնելով ու ափերն իրար հակառակ ուղղությամբ շարժելով:
  - Թելից կախված ընկույզը մոտեցնել սանի բերանի մոտ այնպիսի հեռավորությամբ, որ նա կարողանա փչելով հեռացնել իր դեմքից: Փչել ինչպես կարճ, այնպես էլ՝ երկար շնչով: Սրանք ոկալ շնչառական վարժություններ են, որոնք կատարվում են նաև ստվարաթղթից պատրաստված թիթեռնիկներով:
  - Թելից կախված ընկույզի թելը մատի վրա փաթաթելով կարճեցնել այնքան, որ մնա մեկ թզաչափ: Սաները փորձում են տարուբերելով իրար խփել ընկույզները: Խաղի ընթացքում թելերը փաթաթվում են, որն էլ բավական հետաքրքիր ու զվարժալի է դարձնում խաղը:
  - Սաներից յուրաքանչյուրի ձեռքին մեկական թելից կախված ընկույզ է : Նրանք կանգնում են շրջանաձև, իրար բավական մոտ, ձեռքերը մոտեցնում են և սկսում անկանոն թափահարել այնքան, մինչև թելերը խառնվեն իրար: Ստացվում է շրխկան-չարխափան:
  - Սաները ձեռքերին մեկական Չարխափան բռնած կանգնում են ուղիղ գծով: Դաստիարակն իր չարխափանով անցնում է սաների մոտով և ռիթմիկ շրխկացնում: Սաները կարող են կրկնել նույն ռիթմը կամ՝ շրխկացնել իրենց ռիթմիկ պատկերը: Շրխկոցով իրար բարևում են, հարցեր տալիս և շրխկան պատասխան ստանում:

- ***Չարխափան***

Սաների, դաստիարակի ձեռքին մեկական Չարխափան է: Պետք է խափանեն, քշեն ամեն տեսակ վատը, չարը, անցանկալին, խանգարողը: Երեխաները

չարխափաններով, ոտքերի դոփյուններով, այլ չխչխկացող առարկաներով շրխկացնում և աղմկում են: Ներկաներից մեկը հարցնում է.

-Ի՞նչ եք անում:

-Մուկ ենք բռնում:

-Որ ի՞նչ անեք:

-Որ ուղարկենք:

-ՈՒ՞ր:

-Մկստան:

Նորից են աղմկում:

-Ի՞նչ եք անում:

-Ցուրտն ենք բռնում:

-Ու՞ր ուղարկեք:

-Իր երկիրը՝ հյուսիս:

Նորից են աղմկում:

-Ի՞նչ եք անում:

-Ծուլությունն ենք բռնում:

-Ու՞ր ուղարկեք:

-Օվկիանոսի հատակ:

Նորից են աղմկում:

-Ի՞նչ եք անում:

-Փնթիությունն ենք բռնում:

-ՈՒ՞ր ուղարկեք:

-Խոզերի մոտ:

Նորից են աղմկում:

-Ի՞նչ եք անում:

-Անկարգությունն ենք բռնում:

-ՈՒ՞ր ուղարկեք

:-Կապիկների մոտ:

Այսպես կարելի է շարունակել, մինչև կհոգնեն:

Բարիկենդանի խաղեր

❖ ***Կարմիր կոճակ***

Երեխաները նստում են աթոռներին, ձեքքերը մեկնում են առաջ՝ ափերն իրար կպցրած: Խաղավարը ափի մեջ թաքցնում է կարմիր կոճակը, մոտենում է յուրաքանչյուր երեխայի ու նրա ափի մեջ մտցնելով իր ձեռքերը կոճակը թաքուն գցում է երեխաներից մեկի ձեռքերի մեջ: Ընթացքում կարող է որևէ խաղերգ արտասանել: Վերջանալուց հետո ասում է.

-Կարմի՛ր կոճակ դու՛րս թռիր:

❖ **Մուկ-կատու**

Երեխաները ձեռք ձեռքի տված շրջան են կազմում՝ նախապես մեկին՝ մուկ, մյուսին կատու նշանակելով: Մուկը դրսից որևէ կերպ ներս է մտնում և կատվին խափս տալով՝ դուրս է գալիս մեկ ուրիշ տեղով, իսկ կատուն հետապնդում է նրան և նույն տեղերով մտնելով և դուրս գալով՝ աշխատում է բռնել նրան և դերը նրա հետ փոխել: Բայց երբ մկանը շուտ բռնելու տենչով կատուն ոչ թե նախորդի անցած ճանապարհով է անցնում, այլ ուրիշ թևամիջով, այն ժամանակ նրան փոխարինում էր շրջանում կանգնած մեկը՝ խաղը նույնությամբ շարունակելով:

❖ **Գայլ ու ոչխարը**

Խաղացողներից մեկը դառնում է ոչխար, մյուսը՝ գայլ: Մնացածները ձեռք ձեռքի բռնած շրջան են կազմում, իրենց մեջ են առնում ոչխարին և աշխատում նրան պաշտպանել գայլի հետապնդումներից: Գայլը մնալով դրսում՝ հարձակումներ է գործում շրջափակ կազմողների վրա՝ ջանալով խզել ձեռքերի շղթան ներս մտնել ոչխարին բռնելու: Երբ գայլին հաջողվում էր շրջափակը որևէ տեղում կտրել, այդ ժամանակ ոչխարին փախցնում են շրջափակից դուրս և գալիս են բռնում:

Զարկական խաղեր

❖ **Ձուկոտրոցի**

Ձուկոտրոցի խաղում են երկուսով : Մրցակիցներից յուրաքանչյուրը խաշած, բայց չկոտրված ձու պետք է ունենա: Խաղի նպատակն է պարզել, թե ում ձուն է ավելի ամուր: Խաղացողներից մեկը պետք է ձուն բռնի ափի մեջ՝ բութ մատի և ցուցամատի օղակմամբ, չծածկելով ձվի քիթը, իսկ մյուսը պետք է հարվածի այնպես, որ դիմացինի ձուն կոտրվի: Հաղթողը տիրանում է կոտրած ձվին:

❖ **Ձուպտտոցի**

Խաղացողները հրահանգով պտտում են ձվերը: ՈՒմ ձուն երկար պտտվեց,այդ ձուն համարվում է հաղթողը:

Համբարձման խաղ

❖ **Ծաղկահավաք**

Մանակապարտեզում այն կարելի է խաղալ այսպես. Աղջիկները կլինեն ծաղիկներ, իսկ տղաները՝ մեղուներ, բզեզներ, զատիկներ: Ցանկալի է, որ սաներն ունենան համապատասխան հանդերձանք: Ծաղիկները որև՝ կանաչապատ տարածքում խառը կանգնում են և թեթև օրօրվում: Մեղուները, բզեզները, զատկները բզզալով մոտենում են ծաղիկներին, յուրաքանչյուրն ընտրում է իր զույգին: Մեղուները փոքրիկ դույլերը ձեռքերին հյութ են հավաքում ծաղիկներից, հետո միասին երկու ձեռքերից բռնած պտտվում են տեղում: Զույգերով երգելով գալիս և հավաքվում են նախօրոք

պատրաստված վիճակի տիկնիկի շուրջ: Ծաղիկներն առանձնանում են, կազմում ծաղկեփունջ: Բզեզները, մեղուները, զատիկները, իրար ձեռք բռնած պտտվում են նրանց շուրջը և երգում համբարձման ծիսական երգ:

Գլուխ 2 Գործնական մաս

Գործնական հատվածում պլանավորել եմ ինտեգրված պարապմունք՝ խոսքի զարգացում, ապլիկացիա և ֆիզկուլտուրա առարկաներից:

Պարապմունքի պլան

Պարապմունք	**Խումբ**	**Թեմա**	**Տևողություն**
Ինտեգրված Խոսքի զարգացում, ապլիկացիա, ֆիզկուլտուրա	ավագ	Ձմեռային զվարճանքներ /ընկուզախաղեր/	4 պարապմունք Խոսքի զարգացում /2պ./, ապլիկացիա /1պ./, ֆիզկուլտուրա /1պ./
Նպատակը	**1.** Զարգացնել երեխաների՝ պատմություն հյուսելու ունակությունը, երևակայությունը,ստեղծագործական կարողությունները: **2.** Սովերեցնել ինքնուրույն կազմել և գործածել պարզ և բարդ նախադասություններ, պատմելու ժամանակ ճիշտ փոփոխել /հոլովել/ ակտիվ բառապաշարում եղած բառերը: **3.** Նպաստել մանր մոտորիկայի զարգացմանը: **4.** Զարգացնել արագ կողմնորոշվելու կարողությունը, հավասարակշռության պահպանումը, ճկունությունը,		
Մեթոդներ	Դադարներով ընթերցանություն, խմբային աշխատանք, զույգերով աշխատանք:		
Նյութեր	Մեծադիր պաստառներ /ձմեռ, Ձմեռ պապ/, տոնածառ, հեքիաթի գիրք՝պատրաստված նկարներով, ոսկե ձկնիկի նկար,ընկույզներ, թելեր, մկրատ, սոսինձ:		

Ընթացքը

Խթանման փուլ

Դաստիարակ - Երեխանե՛ր, տարվա ո՞ր եղանակն է:

-Ո՞րն է ձմռան ամենագեղեցիկ, կախարդական տոնը ձեզ համար:

-Ի՞նչու եք այդ տոնն ամենից շատ սիրում:

Բանաստեղծությունների ունկնդրում և քննարկում

Պայծառ տոնածառ

Վ. Վարդանյան

Ի՞նչ պայծառ է ու գեղեցիկ
Տոնածառը այսօրվա,
Մեր մանկական ջերմ սրտերից
Երգն է հնչում նոր տարվա:

Ջա՜ն, մեր ուրախ տոնածառ,
Ջա՜ն, հայրենիք մեր պայծառ:

Ձմեռ պապին

Ս. Մուրադյան

Ո՞վ է դաշտը ներկել ճերմակ,
Սարին, ձորին կարել վերմակ /…/:
-Ձմեռ պապի՜ն…
-Ո՞վ է ծառին գլխարկ կարել,
Ապակուն՝ ծիտ, վարդ նկարել /…/:
Ձմեռ պապի՜ն…
Ձմեռ պապին ամենագետ
Նկարիչ է, դերձակ, վարպետ:

Հարցազրույց

-Երեխանե՛ր, իսկ ձեզանից ո՞վ գիտի Ձմեռ պապը որտեղի՞ց է մանկապարտեզ գալիս:

-Ձմեռ պապը հրաշագործ մարդ է, ուրեմն՝ անպայման նրա ճանապարհին, կախարդական արկածներ կարող են պատահել: Եկե՛ք բոլորս միասին մտածենք , թե ինչպես Ձմեռ պապը եկավ մանկապարտեզ՝ մասնակցելու Նոր տարվա հանդեսին:

-Եկե՛ք հիշենք, որ բառերով են սովորաբար սկսվում հեքիաթները:

-Այսպիսով՝ սկսեմ կարդալ հեքիաթը:

Դաստիարակը խնդրում է սաներին, որ նստեն շրջանաձև, ինքն էլ նստում է նրանց հետ և սկսում կարդալ հեքիաթը՝ անավարտ թողնելով իր մտքերը: Սաները պիտի ավարտեն դրանք:

Հեքիաթ Ձմեռ պապի մասին

-Լինում է, չի լինում մի Ձմեռ պապ է լինում:

-Որտե՞ղ էր ապրում նա /…/:

-Երեխաները նրան հրավիրել էին մանկապարտեզ տոնահանդեսին:

-Ինչպե՞ս հայտնեցին նրան այդ մասին /…/:

-Ձմեռ պապը կարդաց հրավերը և սկսեց ճանապարհի պատրաստություն տեսնել:

-Ի՞նչ վերցրեց իր հետ/…/:

-Նա նստեց իր սահնակը և ճանապարհ ընկավ:

-Ի՞նչ ճանապարհներով անցավ /…/:

-Երբ Ձմեռ պապը հասավ գետակի մոտ, տեսավ, որ կամուրջը կոտրված է:

-Ի՞նչ կարող է նա անել /…/:

-Ձմեռ պապը կարող էր գետը թռչելով անցնել, բայց կախարդական ձեռնափայտը տանն էր մոռացել: Կարող էր գետը ցատկելով անցնել, բայց Ձմեռ պապը շատ ծեր էր, կարող էր ջուրն ընկնել: Ձմեռ պապը նստեց գետի ափին և մտածեց, թե ինչպես վարվի/…/: Հանկարծ լսեց, որ ինչ-որ մեկը կանչում է իրեն:

-Ո՞վ է տեսնես /…/:

-Ոսկե ձկնիկն էր. «Մի՛ վշտանա, ձմեռ պապ, ես քեզ կօգնեմ»:

-Ինչպե՞ս ձկնիկն օգնեց Ձմեռ պապիկին /…/:

-Ձմեռ պապն ուրախացավ և շնորհակալություն հայտնեց ձկնիկին: Իսկ ձկնիկը նրան ասաց. «Պետք չի շնորհակալություն հայտնել, ավելի լավ է, ինձ էլ տա՛ր երեխաների հանդեսին»: Ձմեռ Պապը համաձայնեց, սակայն ինչպե՞ս կարող է ձկնիկին հասցնել մինչև մանկապարտեզ /…/:

-Ահա Ձմեռ պապն ու ոսկե ձկնիկը մանկապարտեզ հասան: Երեխաները նրանց ուրախությամբ դիմավորեցին: Ձմեռ Պապը բոլորին նվերներ բաժանեց, իսկ ձկնիկը կատարեց երեխաների ցանկությունները: Չէ՞ որ ձկնիկը սովորական չէր, այլ՝ կախարդական:

-Երեխանե՛ր, եկեք մտածենք, թե ինչ խնդրե՛նք ոսկե ձկնիկից /…/:

Երեխաները պատմում են իրենց երազանքների մասին:

Նպատակահարմար է թղթեր բաժանել և երեխաներին առաջարկել նկարել այն ամենը, ինչ խնդրում են Ձմեռ Պապից:

Ֆիզկուլտդադար՝ «Մենք փաթիլներ ենք»:

-Երեխանե՛ր պատկերացրեք, որ դուք թեթև ձյունիկներ եք: Փչեց քամին, և ձյունիկները թռա՜ն, պտտվեցի՜ն /հնչում է ցանկացած պարային երաժշտություն և երեխաներն ազատորեն պարում են/:

-Երեխանե՛ր, ես ձեզ ուզում եմ պատմել մի քանի ազգային խաղերի մասին, որոնք խաղացել են ամանորին:

-Ուզու՞մ եք լսել, սովորել խաղերի կանոնները և մենք ել փորձենք խաղալ:

Դաստիարակը ներկայացնում է խաղերի նկարագիրը, հետո բացատրում կանոնները:

Խաղերի նկարագիրը ներկայացված է գլուխ 1-ում:[2]

-Բայց մինչև խաղալը, մենք պետք է պատրաստենք ընկույզները:

Իմաստի ընկալման փուլ

Ապլիկացիայի պարապմունքին երեխաները բաժանվում են խմբերի և սկսում են աշխատել՝ պատրաստելով խաղի համար անհրաժեշտ ընկույզները:

[2] Հետազոտական աշխատանք Գլուխ 1, ենթագլուխ 1.2 էջ 11-12

Դիտարկում

Ամիս, ամսաթիվ՝ 01.12.2023

Խումբ՝ ավագ

Պարապմունք՝ ինտեգրված/ խոսքի զարգացում, ապլիկացիա, ֆիզկուլտուրա/

Հաստատության տնօրեն՝ Մարգարիտ Մուրադյան

Ներկա գտնվեցի ավագ խմբում իրականացվող ինտեգրված պարապմունքին: Խմբասենյակը հարուստ էր դիդակտիկ պարագաներով:

Դաստիարակը դասը վարում էր վերապատրաստման ընթացքում ուսումնասիրած նորագույն մանկավարժական մեթոդներով, որը գովելի հանգամանք է: Դասերը փոխկապակցված էին և շարունակական:

Երեխաներն ընդգրկված էին պարապմունքի մեջ: Պասիվ էին երկու երեխա, որոնք աստիճանաբար՝ դաստիարակի օգնությամբ ընդգրկվեցին:

Խմբային աշխատանք կատարվեց, որի ժամանակ փոքրիկ աղմուկ առաջացավ:

Ինտեգրված պարապմունքը համարում եմ կայացած:

Գովելի է, երբ նկատում ես անընդհատ նորը ներմուծելու և այն կիրառելու ձգտում:

Դիտարկում

Ամիս, ամսաթիվ՝ 01.12.2023

Խումբ՝ ավագ

Մեթոդիստ՝ Թամարա Պիլիյան

Կատարել եմ դիտարկում ավագ խմբում: Պարապմունքն ինտեգրված էր: Օգտագործվել էին տարբեր մեթոդներ, որոնք էլ ավելի դյուրին էին դարձնում երեխաների աշխատանքը և ընկալելիության աստիճանը:

Դաստիարակը խմբասենյակը կահավորել էր դասին համապատասխան՝ օգտագործելով տարբեր դիդակտիկ պարագաներ:

Ե՛վ խթանման, և՛ իմաստավորման , և՛ կշռադատման փուլերն անցկացվեցին հետաքրքիր և յուրօրինակ մոտեցումներով:

Կատարվեց զույգերով և խմբային աշխատանքներ: Խմբային աշխատանքի ընթացքում առաջացավ աղմուկ, որը պայմանավորված էր երեխաների անհամբերությամբ:

Ինտեգրված պարապմունքը հասավ իր տրամաբանական ավարտին և ամեն ինչ մատուցվեց գրագետ կերպով:

Դիտարկում

Ամիս, ամսաթիվ՝ 01.12.2023

Խումբ՝ ավագ

Դաստիարակ՝ Գայանե Անտոնյան

Ներկա գտնվեցի ավագ խմբում անցկացվող ինտեգրված պարապմունքին և կարող եմ ասել, որ պարապմունքը բավականին հաջողված էր:

Պարապմունքի ընթացքում օգտագործվեցին տարատեսակ դիդակտիկ պարագաներ:

Խթանման փուլում դաստիարակը մանրակրկիտ կերպով մատուցեց նյութը, կատարեց հարցադրումներ, որպեսզի սաներին ավելի հասանելի ու պարզ լիներ ամեն ինչ:

Իմաստավորման փուլում կատարեցին ապլիկացիա և երեխաներն իրենց ձեռքով պատրաստեցին այն դիդակտիկ պարագաները, որոնք պետք է օգտագործեին կշռադատման փուլում: Երեխաները մեծ ոգևորությամբ պատրաստեցին ընկույզներ՝ ընկուզախաղերի համար:

Կշռադատման փուլում դաստիարակը կազմակերպեց տարբեր խաղեր, որոնք ընկույզների միջոցով պետք է անցկացվեին: Խաղերն ունեին կանոններ և որոշակի տևողություն, որը թույլ չէր տալիս, որպեսզի ժա,անակի կորուստ գրանցվեր:

Խաղի ավարտից հետո հասա այն եզրահանգման, որ պարապմունքն ստացված էր, իսկ երեխաները ընկալել էին նյութն ամբողջությամբ:

Միակ դիտողությունը, որ կարող եմ կատարել, դա խմբային աշխատանքի ընթացքում երեխաների աղմուկն էր:

Ինտեգրված պարապմունքը տվեց իր պտուղները՝ շնորհիվ դաստիարակի քրտնաջան աշխատանքի և նորարարական մեթոդների:

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրելով թեմայի տեսական մասը և կատարելով գործնական աշխատանք , եկա հետևյալ եզրահանգման, որ ազգային մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր նշանակություն ունեն ազգային տոների և ծեսրի ծանոթացումը հենց նախադպրոցական տարիքից: Ճիշտ է , մանկահասակ երեխաներն ամբողջովին չեն կարող ընկալել ծեսերի իմաստն ու նշանակությունը, բայց նրանց օրինակ ծառայելով, կարելի է մեծ արդյունքների հասնել:

Նախադպրոցական տարիքի սանը ծիսական ազատ միջավայրում իրեն զգում է անկաշկանդ, ձեռք է բերում հմտություններ, կիրառում է իր գիտելիքները, զարգանում է երևակայությունը, ստեղծագործական մտածողությունը, մանր մոտորիկան՝ պաստրաստելով ծիսական պարագաներ: Սանը ազատ արտահայտում է իր միտքը, հարստանում է բառապաշարը: Ծիսական ազատ միջավայրում սանը ինքնադրսևորվում է, ինչն էլ թույլ է տալիս բացահայտելու յուրաքանչյուր սանի կարողությունների մակարդակը:

Սաները խաղալով ազգային խաղերը մեծ ոգևորություն և աշխուժություն դրսևորեցին: Այնքան շատ էին հավանել խաղերը, որ խնդրեցին նոր խաղեր սովորեցնել:

Գրականության ցանկ

1. Ս. Չիբուխչյան, Լ. Սարգսյան «Մայրենի լեզվի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում » Երևան 2011

2. Վ. Բդոյան «Հայ ժողովրդական խաղեր» Երևան 1974

3. Ս. Ս. Մկրտչյան «Տոներ, հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ, ավանդույթ և արդիականություն» Երևան 2010

4. Լալա Սմբատյան Նախաշավիղ 2015.5

5. https://liliazakharyan.wordpress.com